

ՍԱՂՄՈՍ 35

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիներից ազատվելու աղոթք	ՏԵՐԸ Իր ժողովրդի համար վրեժխնդիր է	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Ողբ)	Օգնության աղոթք	Հալածանքի մեջ առաքինի մարդու աղոթք
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոս				
35:1-8	35:1-3 35:4-8	35:1-3 35:4-6	35:1-3 35:4-6	35:1-3 35:4 35:5-6
35:9-16	35:9-10 35:11-14 35:15-16	35:9-10 35:11-12 35:13-14 35:15-16	35:9-10 35:11-14 35:15-16	35:9-10 35:11-12 35:13-14 35:15-16
35:17-21	35:17-18 35:19-21	35:17-18 35:19-21	35:17-18 35:19 35:20-25	35:17-18 35:19 35:20-21
35:22-26	35:22-25 35:26	35:22-25 35:26	35:22-25 35:26	35:22-24 35:25-26
35:27-28	35:27-28	35:27-28	35:27-28	35:27 35:28

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսում գերակշռում են՝

1. աղոթքի խնդրանքները (8 ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ) ՅԱՀՎԵԻՆ, որպեսզի օգնի իր թշնամիների դեմ
2. ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԸ (23) նկարագրող, թե ինչ է սաղմոսերգուն սպասում, որ տեղի կունանա այն մարդկանց, ովքեր՝
 - ա. իր թշնամիներն են
 - բ. իր աջակիցներն են

Բ. Սաղմոսներից շատերում դժվար է հասկանալ, թե ովքեր էին նրա թշնամիները: Այս Սաղմոսում (այսինքն՝ 35:12-14) ակնհայտ է, որ նրանք եղել են մտերմիկ ուխտի ծանոթներ՝ ընկերներ: Սա ուրացումի ցավն ավելի է ուժեղացնում: Սակայն, Սաղմ. 35:1-8 կարծես թե ակնարկում է ռազմական թշնամու:

Գ. Սաղմոս 34 և Սաղմոս 35 միակ Սաղմոսներն են, որտեղ նշվում է «ՅԱՀՎԵԻ հրեշտակը»: Հավանաբար այս է պատճառը, որ դրանք հաջորդում են իրար: Սաղմոսները ընտրվել են, խմբագրվել, և հավաքագրվել անհայտ մարդկանց կողմից, անհայտ ընթացակարգով: Հավատքով ենք ընդունում, որ նրանք եղել են Սուրբ Հոգով առաջնորդված:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 35:1-8

¹Դա՛սու պաշտպանի՛ր, ո՛վ ՏԵՐ, իմ դեմ պայքարողներից,
 Պատերազմի՛ր իմ դեմ պատերազմողների հետ:
²Վերցրո՛ւ զենքն ու զրահը ու ելի՛ր ինձ օգնելու:
³Նաև նիզակը հանի՛ր ու փակի՛ր ինձ հալածողների ճանապարհը:
 Ասա՛ իմ անձին. «Քո փրկությունը ես եմ»:
⁴Իմ անձը փնտրողները թող խայտառակվեն ու ամոթով մնան,
 Թող ետ դառնան ու շփոթության մատնվեն նրանք,
 Որ իմ դեմ չարություն են նյութում:
⁵Հովի բերանն ընկած հարդափոշու նման թող լինեն նրանք,
 Եվ ՏԻՐՈՋ հրեշտակը թող քշի նրանց:
⁶Նրանց ճամփան թող խավար ու սորուն լինի,
 Եվ ՏԻՐՈՋ հրեշտակը թող հալածի նրանց:
⁷Քանի որ առանց պատճառի իրենց որոգայթը թաքցրին փոսի մեջ,
 Որ ինձ համար էին փորել առանց պատճառի:
⁸Թող նրա վրա հանկարծ մի ավերում գա,
 Եվ իր թաքցրած որոգայթը թող իրեն բռնի,
 Հենց նույն կործանման մեջ ինքը թող ընկնի:

35:1-8 Այս պարբերությունը սկսում է մի քանի աղոթքի խնդրանքներով (ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ) 1-3 համարներում:

1. պաշտպանի՛ր – BDB 936, KB 1224, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, ԳՈՅԱԿԱՆԸ հանդես է գալիս երկրորդ արտահայտության մեջ (BDB 937)

2. պատերազմի՛ր – BDB 535, KB 526, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, *Qal* ԴԵՐԲԱՅԸ հանդես է գալիս երկրորդ արտահայտության մեջ
3. վերցրո՛ւ – BDB 304, KB 302, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (բառացի՝ «բռնիր»)
4. ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. հանի՛ր – BDB 937, KB 1227, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Ելից 15:9
6. MT տալիս է «փակի՛ր» - BDB 688, KB 742, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (NKJV, LXX, NIV), սակայն նույն բաղաձայները կարող են նշանակել «պատերազմի կացիներ» (Հերոդոտոս, NASB, NRSV, NJB, JPSOA): UBS տեքստային նախագիծը տալիս է ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻՆ՝ “A” գնահատական: Եբրայերեն բաղաձայները կարող են թարգմանվել «պատերազմի կացին», «նիզակ», «տեգ»՝ ՀԿ-ում այն գտնվում է միայն այստեղ: Հետաքրքիր է, թե սաղմոսերգուն ում նկատի ունի որպես իր թշնամիները:
ա. ռազմիկների, Սաղմ. 35:1-3, 4-6
բ. օրենքի թշնամիներ, Սաղմ. 35:11
գ. մտերիմ ընկերներ, Սաղմ. 35:12-14
7. ասա՛ - BDB 55, KB 65, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Ուշադրություն դարձրե՛ք, թե որքան անձնական է այս արտահայտությունը: Սաղմոսերգուն ուզում է ՅԱՀՎԵՆ հաստատի, որ Նա է իր միակ ազատությունը, տես՝ Սաղմ. 62:2, 89:26: Եթե պետք է լինի փրկություն՝ ազատություն, ապա այն պետք է գա ուխտի Աստծուց՝ ՅԱՀՎԵՆԻՑ:

❖ Սաղմոս 35:4-8 սկսած սաղմոսերգուն հարցնում է ՅԱՀՎԵՆ՝

1. թող ամոթով մնան – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:4, Սաղմ. 40:14, 70:2, 83:17
2. թող նրանք խայտառակ լինեն – BDB 690, KB 744, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:4
3. թող նրանք ետ դառնան – BDB 690, KB 744, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:4
4. թող շփոթության մատնվեն – BDB 344, KB 340, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:4
5. թող լինեն հարդափոշու նման թող լինեն նրանք – BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:8
6. նրանց ճամփան թող խավար ու սորուն – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, Սաղմ. 35:6
7. թող նրա վրա հանկարծ մի ավերում գա – BDB 97, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:8
8. իր թաքցրած որոգայթը թող իրեն բռնի – BDB 539, KB 530, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:8 (սուրբգրային տիպիկ հակադարձում, տես՝ Սաղմ. 9:15, 31:4, 140:5, 142:3)
9. հենց նույն կործանման մեջ ինքը թող ընկնի – BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:8

❖ Այս թշնամիները նկարագրվում են որպես՝

1. ուլքեր իմ կյանքն են փնտրում – BDB 134, KB 153, *Piel* ԴԵՐԲԱՅ, Սաղմ. 35:4
2. իմ դեմ չարություն են նյութում – BDB 362, KB 359, *Qal* ԴԵՐԲԱՅ, Սաղմ. 35:4
3. ուլքեր առանց պատճառի իրենց որոգայթ լարեցին իմ դեմ – BDB 380, KB 377, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 35:7
4. ուլքեր առանց պատճառի իմ անձի համար փոս փորեցին – BDB 343, KB 340, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 35:7 (նկատեք, որ սա կրկնվում է շեշտադրության համար)

35:2 «գեներն ու գրահը» Սրանք (BDB 857, KB 1037 և BDB 171, KB 545) վահանների տեսակներ էին: BDB սահմանում է «գեները» (BDB 857) որպես մի մեծ, մարմնի չափով վահան, սակայն չի տալիս մյուսի չափսերը: Ենթադրվում է, որ երկուսն էլ զինվորները տանում էին պատերազմի դաշտ (կամ/և

նրանց զինակիրները): Հետևաբար մեկը նետի և աղեղների համար էր (ամբողջ մարմնի համար) և մյուսը ըմբշամարտի համար (ավելի փոքր, BDB 171; NIDOTTE, հատոր 2, էջ՝ 846):

35:3 «հալածողներ» Այս տերմինը (BDB 922, KB 1191, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) հաճախ է կիրառվում Սաղմոսներում կատաղի թշնամիների համար (տես՝ Սաղմ. 7:1,5, 31:15, 71:11, 109:16, 119:84,86): Այն կարող է լինել՝

1. ռազմական հալածանք
2. որսի հալածանք
3. կատաղի հակառակության փոխաբերություն

35:5-6 «ՏԻՐՈՋ հրեշտակը» Հրեշտակները պաշտպանության գործակալներ էին Սաղմ. 34:7-ում, սակայն այստեղ՝ դատաստանի: Ոմանք հնարավոր է ասեն Աստվածաշունչը լինելով հինավուրց, նախագիտական գիրք, նախապաշարմունքով լի է աներևույթ, անբացատրելի բաների մասին: Ի-հարկե ճիշտ է, որ այստեղ առեղծված կա, սակայն եթե մեկը ապավինում է Աստվածաշնչին, որպես բացառիկ հայտնություն միակ ճշմարիտ Աստծո մասին, ապա նա պետք է ընդունի դրա աշխարհայացքը, որը բովանդակում է տեսանելի և անտեսանելի աշխարհի միջև կապը: Ստույգ ինչպես, երբ, ով է առնչվում այս փոխադարձ կապի հետ, անհայտ է:

Հաճախ դժվար է իմանալ գրականական (գործածված ազդեցության համար) և բառացի գործածությունների (այսինքն՝ հրեշտակների միջամտության կամ գործունեության) միջև տարբերությունը: Այստեղ կան երկու կիշեներ՝ ամեն բան ունի հրեշտակային բաղադրիչ ի հակադրություն ոչինչ չունի հրեշտակային բաղադրիչ: Մենք հավատքով և սուրբգրային հայտնությամբ ենք ապրում: Տարբեր անհատներ այս կամ այն կողմն են բռնում:

Կյանքը հաճախ «խավար» և «սայթաքուն» է (տես՝ Սաղմ. 73:18), սակայն ՅԱՀՎԵԻՆ վստահողների համար Նա քայլում է նրանց հետ խորը ձորերի խավարի (տես՝ Սաղմ. 23:4, 107:14): Կյանքը հաճախ նկարագրվում է փոխաբերական լեզվով՝ որպես ճամփորդություն: Հարթ, բարձր, ուղիղ ճանապարհը լավ կյանքի նկարագրությունն է, մինչդեռ խավար, սայթաքուն խոչնդոտներով ճանապարհը կամ անհարթ ճանապարհը՝ խնդրի նկարագրություն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԻՐՈՋ ՀՐԵՇՏԱԿԸ **SPECIAL TOPIC: THE ANGEL OF THE LORD**

Ակնհայտ է, որ Աստված ՀԿ-ում հայտնում է Իրեն մարդկային ֆիզիկական կերպարանքով: Երրորդությանը հետևող մարդկանց համար հարց է առաջանում, թե ով է Երրորդության միջից այս դերը կատարում: Քանի որ Հայր Աստվածը (ՅԱՀՎԵ) և Իր Հոգին հետևողականորեն մարմնավորված չեն եղել, ավելի հավանական է ընդունել, որ այդպիսի դեպքերում մարդկային կերպարանքով հայտնվել է մարմին հագած Մեսիան:

Հետևյալ ցանկը կարող է օգնել այն մարդկանց, ովքեր դժվարանում են պատկերացնել հրեշտակների հետ կապված դեպքերը որպես աստվածհայտնություն՝

1. Տիրոջ հրեշտակը որպես հրեշտակ
 - ա. Ծննդ. 24:7,40
 - բ. Ելից 23:20-23, 32:34
 - գ. Թվոց 22:22
 - դ. Դատ. 5:23
 - ե. 2 Թագ. 24:16
 - զ. 1 Մնաց. 21:15-30
 - է. Չաք. 1:12-13
2. Տիրոջ հրեշտակը որպես աստվածհայտնություն
 - ա. Ծննդ. 16:7-13, 18:1-19:1, 22:11-15, 31:11,13, 48:15-16
 - բ. Ելից 3:2,4, 14:19 (13:21)

գ. Դատ. 2:15, 6:22-24, 13:3-23

դ. Ովսեա 12:3-4

ե. Չաք. 3:1-5

Միայն համատեքստից կարելի է հասկանալ, թե որ տարբերակին է պատկանում այս արտահայտությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 35:9-16

⁹Իսկ իմ անձը ՏԻՐՈՉՈՎ է ցնձալու,

Նրա փրկությամբ է ուրախանալու:

¹⁰Իմ բոլոր ոսկրերը ասելու են,

«ՏԵՐ, ո՞վ կա Քեզ նման, որ ազատում է խեղճին իրենից զորեղի ձեռքից,
Ու աղբատին և կարիքավորին՝ իրենց կողոպտողից»:

¹¹Սուտ վկաներ ելան, ինձ մեղադրեցին այնպիսի *բաների* համար,
Որոնց մասին չգիտեի:

¹²Լավության դիմաց չարությամբ հատուցեցին ինձ՝
Անձս կատարյալ կորստի մատնելով:

¹³Բայց ես նրանց հիվանդ եղած ժամանակ քուրձ էի հագնում.

Իմ անձը խոնարհեցրի ծոմով,

Ու իմ աղոթքը ծոցս վերադարձավ:

¹⁴Ինչպես իմ ընկերոջ կամ եղբոր հետ,

Այնպես էլ *նրա* հետ էի վարվում,

Իր մոր համար սուգ ունեցողի պես տրամոյթյամբ խոնարհվում էի:

¹⁵Բայց իմ պատուհասի պահին նրանք ուրախացան.

Եվ միասին հավաքվեցին, անարգներն իմ դեմ խմբվեցին,

Իսկ ես ոչինչ չգիտեի. պատառոտեցին ինձ առանց դադար առնելու.

¹⁶Խնջույքների կեղծավոր ծաղրածուների հետ

Ատամներն էին կրճտացնում ինձ վրա:

35:9-16 Այս պարբերությունը հաստատում է ՅԱՀՎԵԻ ազատությունը՝

1. Իմ անձը ցնձալու է Տիրոջով – BDB 162, KB 189, *Qal ԱՆԿԱՏԱՐ*

2. ուրախանալու է Նրա փրկությամբ – BDB 965, KB 1314, *Qal ԱՆԿԱՏԱՐ*

3. նրա բոլոր ոսկրները (այսինքն՝ նրա անձը, տես՝ Սաղմ. 51:8) ասելու են – BDB 55, KB 65, *Qal ԱՆԿԱՏԱՐ* (այսինքն՝ «անձ» *nephesh* /BDB 659/ և «ոսկրներ» տերմինները դարձվածք են ամբողջ անձի համար, տես՝ Սաղմ. 6:2):

ա. ով կա Քեզ նման, տես՝ Ելից 15:11, Սաղմ. 86:8, Միքիա 7:18, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

բ. ով ազատում է խեղճին

Այստեղ (35:11) սաղմոսերգուն սկսում է նկարագրել իր թշնամիներին՝

1. սուտ վկաներ – BDB 729 ԿԱՉՍՈՒԹՅԱՄԲ BDB 329, Սաղմ. 35:11

2. որոնք մեղադրում էին նրան բաների մեջ, որոնք չգիտեր, Սաղմ. 35:11 (տեսարանը դատարանի միջավայր է և սուտ վկաները հարցնում են սաղմոսերգուին բաներ, որոնց մասին նա չգիտեր)

3. որոնք բարիքի փոխարեն չարիք են հատուցում, Սաղմ. 35:12, տես՝ Սաղմ. 38:20, 109:5 (հակադարձը, տես՝ Սաղմ. 35:13-14)

4. որոնք ուրախանում էին նրա պատուհասի ժամանակ, Սաղմ. 35:15

5. որոնք հավաքվում են միասին նրան զրպարտելու, Սաղմ. 35:15

6. ովքեր իրենց ատամներն են կրճտացնում նրա վրա, Սաղմ. 35:16, տես՝ Սաղմ. 37:12, 112:10, Հոր 16:9, Ողբ 2:16, Մատթ. 8:12, 25:30, Դուկ. 13:28

Սաղմ. 35:13 և 14-ում սաղմոսերգուն նկարագրում է, թե ինչեր է արել այդ մարդկանց համար, ովքեր հալածում էին իրեն՝

1. երբ նրանք հիվանդ էին, նա քուրձ էր հագնում նրանց համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒԲ ԾԵՍԵՐԸ)
2. նա իրեն խոնարհեցնում էր, ծոմ էր պահում, և աղոթում նրանց համար
3. նա սգում էր նրանց համար (ինչպես մտերիմ ընկերոջ կամ եղբոր համար)
4. նա սգում էր նրանց համար (ինչպես իր սեփական մոր համար)

Գոյություն ունի տեսանելի հակադրություն թե ինչպես է գործում հավատարիմ հետևորդը և անհավատը: Աստծո հետ մեր կապը հստակ երևում է այն բանով, թե ինչպես ենք վերաբերվում ուրիշներին:

35:12բ MT տալիս է երեխաների կորստյան «վիշտ» (BDB 1013), որը սարսափելի ցավ է: Neb առաջարկում է շտկում՝ «նրանք իմ կյանքն են փնտրում», REB՝ «սպասելով իմ կյանքը վերցնելու համար»:

Ինչպես որ շատ հաճախ այդպես էլ լինում է, մերօրյա ընթերցողները լիարժեք չեն հասկանում ՀՄԱ-ի մշակույթի պոեզիան: Եվ չնայած որ կան հազվադեպ բառեր և նկարագրություններ, ամբողջական շեշտադրությունը հասկանալի է համատեքստից, հատկապես զուգահեռականությունից:

35:13գ

NASB, LXX

JPSOA

NRSV, TEV

TEV

«Եվ իմ աղոթքը ծոցս վերադարձավ»

«թող որ ինչի համար աղոթեցի, ինձ պատահի»

«ես աղոթեցի գլուխս խոնարհած գրկիս մեջ»

«մշտապես իմ սրտում նորովի աղոթելով»

MT անհայտ է: Այսպիսով թարգմանությունները առաջարկում են՝

1. սաղմոսերգուի աղոթքները և գործերը իր թշնամիների համար Սաղմ. 35:13-14-ում վերադառնան իր օգտին, ոչ թե նրանց (տես՝ Մատթ. 10:13, Գուկ. 10:6)
2. արտահայտությունը նկատի ունի իր մարմնի դիրքը աղոթքի ժամանակ
3. արտահայտությունը նկատի ունի կրկնվող աղոթքը

35:15

NASB, NRSV, NJB, JPSOA, REB

NKJV, TEV

NEB

«սայթաքում»

«հակառակություն»

«սրիկաներ»

MT տալիս է «իմ սայթաքելուց» (BDB 854, տես՝ Սաղմ. 38:17, Հոր 18:12): UBS տեքստային նախագիծը (էջ՝ 220) տալիս է MT տարբերակին “C” գնահատական (բավականին կասկածելի): Այն առաջարկում է «կաղացողներ» նկատի ունենալով վիրավորված սաղմոսերգուին (էջ՝ 220): UBS *ձեռնարկը* (էջ՝ 335) առաջարկում է, որ սաղմոսերգուն կաղում էր վիրավոր կենդանու պես: Եթե այդպես է, ապա «հավաքվածները» կարող էին լինել շների ոհմակի պես:

35:16

NASB

NKJV

NRSV

TEV

NJB

REB

JPSOA

«խնջույքի անաստված խեղկատակների պես»

«խնջույքների ժամանակ անաստված ծաղրողների պես»

«նրանք անամոթաբար ավելի ու ավելի էին ծաղրում»

«ինչպես մի կաղի ծաղրողների պես»

«երթե ես ընկնեմ, նրանք կշրջապատեն ինձ»

«երբ ես սայթաքեցի, նրանք ծաղրեցին ինձ»

«ամբարիշտների հետ, ծամածռությամբ ծաղրելով»

MT տալիս է «ինչպես ամենաանմեղ ծաղրողներ», որն իհարկե իմաստ չի արտահայտում: Այսպիսով անգլերեն թարգմանությունները փորձել են զուգահեռներ գտնել Սաղմ. 35:15 և 16-ի միջև,

սակայն դրանք միայն վարկածներ են: AB (էջ՝ 214) առաջարկում է շտկում, որի արդյունքում ունեցել է «ինձ շրջապատող ծաղրողները»:
MT առաջին կամ ամենահին երբայերեն ձեռագիրը չէ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 35:17-21

¹⁷Ո՛վ ՏԵՐ, մինչև ե՛րբ ես նայելու:

Ազատի՛ր իմ անձը նրանց կործանարար արարքներից,

Իմ միամորիկին՝ առյուծներից:

¹⁸Մե՞ծ հավաքներում գոհություն եմ մատուցելու Քեզ,

Մե՞ծ բազմության մեջ փառաբանելու եմ Քեզ:

¹⁹Առանց պատճառի ինձ հետ թշնամացածները թող չծիժաղեն վրաս,

Առանց պատճառի ինձ ատողները թող աչքով չունեն:

²⁰Քանի որ նրանք խաղաղություն չեն խոսում,

Այլ երկրում եղած հանդարտ մարդկանց դեմ նենգություն են մտածում:

²¹Իսկապես իրենց բերանը լայն բացեցին իմ դեմ՝ ասելով.

«Ահա՛, ահա՛, մեր աչքերը տեսան դա»:

35:17-21 Ի տարբերություն նախորդ պարբերության, այս մեկը սկսվում է ՅԱՀՎԵԻՆ հարցնելով ինչու և ապա գործելու համար մի աղոթք:

1. մինչև ե՛րբ ես նայելու /չես գործելու/ - BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (այս նույն տրամադրությունն է ինչպես Սաղմ. 13:1-2, 22:1-2, Ամբ. 1:2-4, ՅԱՀՎԵՆ չի պատասխանում այնպես, ինչպես սաղմոսերգուն է սպասում):

2. փրկի՛ր (բառացի՝ «ես բեր») իմ անձը – BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սաղմոս 35:18 նկարագրում է, թե ինչ կանի սաղմոսերգուն, եթե ՅԱՀՎԵՆ փրկի իրեն՝

1. ես գոհություն եմ մատուցելու Քեզ մե՞ծ հավաքներում (տաճարի հավաքներին, տես՝ Սաղմ. 22:25, 40:9, 10) – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

2. մե՞ծ բազմության մեջ փառաբանելու եմ Քեզ (գուգահեռվում է կետ 1-ի հետ) – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

Սաղմոս 25:19 վերադառնում է Սաղմ. 35:5-8-ի «թող նրանք . . .» ձևաչափին:

1. թույլ մի տուր, որ առանց պատճառի իմ հետ թշնամացածները ծիժաղեն վրաս – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

2. ոչ էլ նրանք, որ ատում են ինձ առանց պատճառի, թող աչքով չանեն – BDB 902, KB 1147, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Առակ. 6:12-14, 10:10

Սաղմ. 35:20-21 տալիս է այն պատճառները, թե ինչու ՅԱՀՎԵՆ պետք է գործի իր թշնամիների դեմ:

1. նրանք խաղաղությամբ չեն խոսում

2. նրանք նենգություն են մտածում

3. իրենց բերանը լայն են բացում իմ դեմ

4. նրանք ասում են՝ «Ահա, ահա, մեր աչքերը տեսան դա»

35:19 Հիսուսն այս համարի մի մասը մեջբերում է Հովհաննես 15:25-ում նկատի ունենալով Իրեն՝ տիպաբանության իմաստով:

❖ «**առյուծներ**» Տես Սաղմոս 34:10-ի գրառումը:

35:20 «երկրում եղած հանդարտ մարդկանց» Այս արտահայտությունը յուրահատուկ է: Դրա գուգահեռը կարծես թե նկատի ունի այն մարդկանց, ովքեր դժվարություններ չեն ստեղծում, այլ խաղաղություն են փնտրում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 35:22-26

²²Ո՛վ ՏԵՐ, Դու տեսար, լուռ մի՛ մնա,

Ո՛վ ՏԵՐ, մի՛ հեռանա ինձնից:

23Արթնացի՛ր, նայի՛ր իմ դատաստանին ու դատին,

Աստված իմ ու ՏԵՐ իմ:

24Քո արդարության համեմատ դատի՛ր ինձ,

Ո՛վ իմ ՏԵՐ Աստված, որպեսզի չուրախանան ինձանով .

25Իրենց սրտի մեջ թող չասեն .

«Ահա մեր փափագածը կատարվեց» .

Ու թող չասեն . «Կույ տվեցինք նրան»:

26Թող ամաչեն և միասին խայտառակվեն իմ վերքի վրա ծիծաղողները .

Ամոթ ու անարգանք թող հագնեն

Իմ հանդեպ բարձրամտությամբ վարվողները:

35:22-26 Սաղմոսերգուն իրավիճակի գիտության համար դիմում է ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ. 10:14, 32:8, 33:18, 34:15, Ելից 3:7): Քանի որ Նա գիտեր իր թշնամիների հարձակման մասին, խնդրում է՝

1. լուռ մի՛ մնա – BDB 361, KB 357, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 28:1, 39:12, 83:1, 109:1, նաև նկատեք՝ Ամբ. 1:13
2. հեռու մի՛ մնա ինձնից – BDB 934, KB 1221, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 10:1, 22:11, 38:21, 71:12

Այս ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԻՆ հաջորդում են երեք հատուկ աղոթքի խնդրանքներ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ) դատարանի արդարության համար (այսինքն՝ «իրավունքի», «մեղադրանքի»):

1. շարժվիր – BDB 734, KB 802, *Hiphil ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*, տես՝ Սաղմ. 7:6, 44:23, 59:4, 80:2
2. արթնացի՛ր – BDB 884, KB 1098, *Hiphil ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*
3. դատի՛ր – BDB 1047, KB 1622, *Qal ՀՐԱՄԱՅԱԿԱՆ*, տես՝ Սաղմ. 26:1, 43:1, 139:1,23, նկատե՛ք, որ դատաստանը «Քո արդարության համեմատ» է (տես՝ Սաղմ. 31:1գ, Հռոմեացիների 4-6, Գաղատացիների 3):

Հաջորդ համարներում (Սաղմոս 35:24բ-26) առկա է 6 *Qal ԱՆԿԱՏԱՐԱՆԵՐԻ* մեկ այլ շարք, որն օգտագործված է ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

1. թույլ մի տուր, որ ուրախանան ինձանով – BDB 970, KB 1333, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:24
2. թույլ մի՛ տուր, որ իրենց սրտերում ասեն, «Ահա, մեր փափագածը կատարվեց» - BDB 55, KB 65, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:25
3. թույլ մի՛ տուր, որ ասեն. «Մենք նրան կույ տվեցինք» - BDB 55, KB 65, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:25
4. թող ամոթահար լինեն – BDB 101, KB 116, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:26
5. թող խայտառակ լինեն – BDB 344, KB 340, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:26
6. ամոթ ու անարգանք թող հագնեն – BDB 344, KB 340, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:26

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 35:27-28

27Թող ցնձան և ուրախանան նրանք,

Որ իմ արդարությունն են սիրում, ու միշտ թող ասեն .

«ՏԵՐԸ փառավորվի՛, որ ցանկանում է Իր ծառայի խաղաղությունը»:

28Եվ ամբողջ օրը լեզուս Քո արդարության մասին է խոսելու .

Ու Քո փառաբանությունն է անելու:

35:27-28 Դարձյալ այստեղ առկա չորս *Qal ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ* մի շարք, որոնք կիրառված են ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով:

1. թող նրանք, ովքեր իմ արդարություն են սիրում (տես՝ Սաղմ. 35:24ա) ցնձան և ուրախանան – BDB 943, KB 1247, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:27*
2. թող նրանք ցնձան (գուգահեռ է կետ 1-ին) – BDB 970, KB 1333, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:27*
3. թող միշտ ասեն – BDB 55, KB 65, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:27*
4. ՏԵՐԸ փառավորվի – BDB 152, KB 178, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 35:27*

35:28 Անհավատի լեզուն ստեր, բամբասանքներ և դառնություն է տարածում, սակայն հավատարիմ հետևորդի լեզուն պատմում է՝

1. ՅԱՀՎԵԻ արդարության մասին, տես՝ Սաղմ. 51:14, 71:15, 24
2. Նրա փառաբանությունը

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեգրույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է այս Սաղմոսը գործածում ՅԱՀՎԵԻ նկարագրությունը որպես պատերազմող:
2. Թվարկե՛ք, թե ինչեր է խնդրում, որ ՅԱՀՎԵՆ անի իր թշնամիների հետ Սաղմ. 35:4-8-ում և դարձյալ Սաղմ. 35:24բ-26-ում:
3. Ի՞նչ վարդապետություն է «ո՛վ կա Քեզ պես» արտահայտությունը ակնարկում (Սաղմ. 35:10):
4. Ինչո՞ւ է սաղմոսերգուն իրեն զգում դավաճանված իր ծանոթների կողմից (տես՝ Սաղմ. 35:13-14):
5. Ի՞նչ են ենթադրում «Ահա, Ահա» բառերը (տես՝ Սաղմ. 35:21, 25):
6. Թվարկե՛ք այն բարի բաները, որոնք սաղմոսերգուն խնդրում է Սաղմ. 35:27-ում իր աջակիցների համար: